ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

Ի պատասխան Ձեր 18.03.2026թ. հ. 61-2026թ. գրության՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու փ. հ. 69 շենքի տանիքն անբարեկարգ վիճակում լինելու, վերջինիս հետևանքով և տեղումների պատճառով հ.61 բնակարանի առաստաղը վնասվելու վերաբերյալ, տեղեկացվում է.

Գրություն է ուղարկվել վերոնշյալ շենքը կառավարող «Սիփան» համատիրություն: Այնուհետև վերջինիս ներկայացուցչի, բնակարանի սեփականատիրոջ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ներկայացուցչի կողմից կատարվել է վնասված տանիքի և առաստաղի համատեղ ուսումնասիրություն, և տանիքի վերանորոգման աշխատանքները, ըստ «Սիփան» համատիրության գրավոր տեղեկացման, ներառվել է վերջինիս 2026թ. ծրագրում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ